ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված գործակարգավարական խորհրդակցության

06.07.2026թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր մարզպետ Ա.Մկրտչյանը.
Մասնակցում էին
Ա.Ղարիբյանը -մարզպետի տեղակալ
Ռ.Մարգարյանը - մարզպետի տեղակալ
Լ.Աբրահամյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Է.Կռոյանը - մարզպետի օգնական
Մ.Դալլաքյանը - գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Երիցյանը, Վ.Ղարսայանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. **Նախորդ ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների և տրված հանձնարարականների վերաբերյալ հաշվետվություն**
   /զեկուցող Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ/
2. **Այլ հարցեր**:

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Մկրտչյանը շնորհավորեց Ռ.Մարգարյանին Լոռու մարզպետի տեղակալի պաշտոնում և Վ.Ղարսայանին աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, ցանկացավ բեղմնավոր աշխատանք ի բարօրություն Լոռու մարզի բնակիչների և ի շահ Հայաստանի Հանրապետության:
2. Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Ղարիբյանը, Ռ.Մարգարյանը, աշխատակազմի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյանը և ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին անցած ժամանակաշրջանում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց.

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ռ.Մարգարյանին, աշխատակազմի քաղաքաշի-նության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Վ.Ղարսայանին՝

Ներկայացնել տեղեկատվություն խնդրահարույց, ինչպես նաև սկսված, սակայն՝ ժամկետներում չավարտված շինարարական օբյեկտների վերաբերյալ և առաջարկություններ՝ շրջայցեր իրականացնելու վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել աշխատանքային կարգապահության բարձրացման, ինչպես նաև տրված հանձնարարականների պատշաճ և սահմանված ժամկետներում կատարելու ուղղությամբ:

3. Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյանին, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա.Շիրինյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշների կատարման, ինչպես նաև՝ կուտակված ապառքների վճարման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ և յուրաքանչյուր երկուշաբթի ներկայացնել տեղեկատվություն:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Մ.Դալլաքյանին, մարզպետի խորհրդական Լ.Աբրահամյանին՝

Համատեղ քննարկումներ իրականացնել և 1-շաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ թափառող շների կացարանների ստեղծման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետի օգնական Հ.Հակոբյանին՝

Ներկայացնել մանրամասն տեղեկատվություն քարոզարշավի ընթացքում ազգաբնակչության կողմից բարձրացված հարցերի և դրանց լուծման ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Երիցյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն մարզային սպորտային ձեռքբերումների և նվաճումների, ինչպես նաև մարզիկների վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Մ.Խեչումյանին՝

Ներկայացնել առաջարկություն Լոռու մարզի խորհրդի նիստ հրավիրելու և անցկացնելու վերաբերյալ:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-06 15:25:53 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99